ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/325 «22» 10 2025 թ.

« Նեքստ Ջեներեյշն » ՍՊ ընկերության տնօրեն
Մ. Ունջուղուլյանին
(ՀՎՀՀ 01359731)
Հասցե՝ Ք.Երևան, Շիրազի փ. / 24 շ. / 44 բն. Աջափնյակ
էլ. հասցե՝ mkrtichhk@gmail.com
Հեռ.՝ +37494648686

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Նեքստ Ջեներեյշն» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 14 մարտի 2025 թվականին կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ–2025/Հ–26–1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերությունը պարտավոր էր մատակարարել 6000 հատ պոլո շապիկներ-կարճաթև (այսուհետ՝ Ապրանք), սակայն, որից Պայմանագրով սահմանված ժամկետում չի մատակարարվել 3050 հատը:

24 սեպտեմբերի 2025 թվականին թիվ 15/12/260083-25 գրությամբ Ընկերությունը ծանուցվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետների խախտման վերաբերյալ:

Ընկերության կողմից մինչ օրս մասնակի չի մատակարարվել մատակարարման ենթակա 3-րդ խմբաքանակի Ապրանքը և չի կատարվել Պայմանագրային պարտավորությունները, խախտվել է Պայմանագրի 2.1.1 կետը, որը սահմանում է, որ «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել»:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի այն է՝ «պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից»:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և մատակարարը խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի մասնակի լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարության և «Նեքստ Ջեներեյշն» ՍՊ ընկերության միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ–2025/Հ–26–1 ծածկագրով գնման Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի մասնակի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ընկերությանը տրվում է 5 օրացուցային օր սահմանված տուգանքը 0.5% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ 57 600 (հիսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամը և սահմանված տույժը յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ 3-րդ խմբաքանակի չմատակարարված Ապրանքների մասով՝ 19 աշխատանքային օրերի նկատմամբ՝ 17 328 (տասնյոթ հազար երեք հարյուր քսաներեք) ՀՀ դրամը վճարելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար՝ 273 600 (երկու հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման գումար՝ 1 152 000 (մեկ միլիոն հարյուր հիսուներկու հազար) ՀՀ դրամը փոխանցելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, «Նեքստ Ջեներեյշն» ՍՊ ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

« 22 » 10 2025թ.

ք.Երևան

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Ա. Աբասյան
Հեռախոս՝ 010 59 60 21